



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

N 15

„ 20 „ մարտի 2014թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1693-Ն որոշմամբ հաստատված ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ուղղվածության և միջոցառումների ծրագրի 14-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014թվականի փետրվարի 10-ի թիվ 85-Ա որոշման պահանջները, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում երիտասարդական քաղաքականության արդյունավետության բարձրացման, երիտասարդական մասնակցության խթանման նպատակով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կանոնադրությունը /հավելված 1/:
2. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անհատական կազմը /հավելված 2/:



Է. ԿԱԶԱՐՅԱՆ